ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դիմիտրով համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դիմիտրով (094)730000,, dimitrov-gyuxapetaran@mail.ru,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 դեկտեմբերի 2015 թվականի N 25

ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի ԹԻՎ 10 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով, համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել նիստի հետևյալ օրակարգը.

1. Դիմիտրով համայնքի 2016 թվականի տեղական տուրքերի և վճարների միասնական դրույքաչափերը սահմանելու մասին:
/Զեկ. Ա. Իոնանով/
2.Համայնքի ղեկավարի 2016 թ. վարձատրության չափը որոշելու մասին:
3. 2016 թվականի համար Դիմիտրովի գյուղապետարանի աշխատակազմի, մշակույթի տան և մանկապարտեզի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:/Զեկ. Ա. Իոնանով/
4.Համայնքի 2015 թվականի բյուջեի ծախսային մասում փոփոխություն կատարելու մասին:
/Զեկ. Ա. Իոնանով/

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՀԵՆՐԻԿ
2. ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ
3. ՄԻՐԶՈՅԱՆ ԳՐԻԳՈՐ
4. ՄԽԻԹԱՐՅԱՆ ԵՐԱՆՈՒՀԻ
5. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՄ ԻՈՆԱՆՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ԴԻՄԻՏՐՈՎԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ *04200683*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դիմիտրով համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դիմիտրով (094)730000,, dimitrov-gyuxapetaran@mail.ru,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 դեկտեմբերի 2015 թվականի N 26-Ն

ԴԻՄԻՏՐՈՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով և << Տեղական տորքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ,10-րդ,11-րդ հոդվածներով համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է.

Սահմանել Դիմիտրով գյուղական համայնքի 2016 թվականի տեղական տուրքերի և վճարների միասնական դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՀԵՆՐԻԿ
2. ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ
3. ՄԻՐԶՈՅԱՆ ԳՐԻԳՈՐ
4. ՄԽԻԹԱՐՅԱՆ ԵՐԱՆՈՒՀԻ
5. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԱՆ ԻՌՆԱՆՈՎ

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ԴԻՄԻՏՐՈՎԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ *04200683*

Հավելված
Դիմիտրով համայնքի ավագանու
2015 թվականի դեկտեմբերի 1-ի
թիվ 26-Ն որոշման

ԴԻՄԻՏՐՈՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 7500 դրամ.

բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000 դրամ,

բբ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25000 դրամ,

բգ) 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25 000 դրամ,

բդ) 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50 000 դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500 դրամ,

դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2500 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 1500 դրամ.

բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է

նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 2000 դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 2500 դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 2500 դրամ:

5. Համայնքի տարածքում՝

ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

բ) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150 000 դրամ.

գ) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղականտուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 30 000 դրամ.

գա) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղականտուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 1000 դրամ.

ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 1000 դրամ.

5[1]. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար 50.000 դրամ:

6. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա) առևտրի օբյեկտների համար՝ 25 000 դրամ.

բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50 000 դրամ.

գ) բաղնիքների (սաունաների) համար՝ 200 000 դրամ.

դ) խաղատների կազմակերպման համար՝ 500 000 դրամ.

ե) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250 000 դրամ.

զ) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100 000 դրամ:

7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ.

բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500 դրամ.

գ) այլ արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ.

դ) դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ:

8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 3 000 դրամ:

Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 50 000 դրամ:

9. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 10 000 դրամ:

1-ին, 2-րդ և 3-րդ կետերով սահմանված դրույքաչափերը հաշվարկված են 0.5 գործակցի կիրառմամբ :

Համայնքում սահմանել տեղական վճարների հետևյալ տեսակները և վճարների դրույքաչափերը `

1. համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտական ակտի ձևակերպման համար, ինչպես նաև շահագործման թույլտվություն տրամադրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար-7500 դրամ.

2. Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝5000 դրամ

3. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար 3000 դրամ.

4. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունը կազմակերպելու համար՝ աղբահանության վճարառկա մեկ բնակչից ամիսը 70 դրամ.

Աշխատակազմի քարտուղար՝ Թ. Արշակյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դիմիտրով համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դիմիտրով (094)730000,, dimitrov-gyuxapetaran@mail.ru,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 դեկտեմբերի 2015թվականի N 27-Ն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ կետով, համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է՝

2016 թվականին համայնքի ղեկավարին վաչձատրել 170000 /մեկ հարյուր յոթանասուն հազար/ դրամ:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՀԵՆՐԻԿ
2. ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ
3. ՄԻՐԶՈՅԱՆ ԳՐԻԳՈՐ
4. ՄԽԻԹԱՐՅԱՆ ԵՐԱՆՈՒՀԻ
5. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԱՆ ԻՈՆԱՆՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դիմիտրով համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դիմիտրով (094)730000,, dimitrov-gyuxapetaran@mail.ru,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 2015թվականի N 28-Ն

ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ԵՎ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ կետով և << Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածով, համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել գյուղապետարանի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը 2016 թ. համար՝ համաձայն հավելված 1-ի:
2. Հաստատել մշակույթի տան աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը 2016 թ. համար՝ համաձայն հավելված 2-ի:
3. Հաստատել մանկապարտեզի աշխատակիցների քանակը,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը 2016 թ. համար՝ համաձայն հավելված 3-ի:
4. 2016 թվականի հունվարի 1-ից ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 22 դեկտեմբերի 2014 թվականի <<ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ, ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԹԻՎ 28-Ն և 24 հունիսի 2015 թվականի<<ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 28-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԹԻՎ 13-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՀԵՆՐԻԿ
2. ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ
3. ՄԻՐԶՈՅԱՆ ԳՐԻԳՈՐ
4. ՄԽԻԹԱՐՅԱՆ ԵՐԱՆՈՒՀԻ
5. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԱՆ ԻՈՆԱՆՈՎ

Հավելված 1
Դիմիտրով գյուղական համայնքի ավագանու
2015 թվականի դեկտեմբերի 1-ի թիվ 28– Ն որոշման

ԴԻՄԻՏՐՈՎԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԻ ՎԱՐՉԱՐՏՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ, ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ և ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների քանակը-9
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը /ՀՀ դրամ/
Համայնքի ղեկավար		170000
ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆ		
Համայնքի ղեկավարի տեղակալ	1	130000
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ		
Աշխատակազմի քարտուղար /1.2-1/	1	136000
Աշխատակազմի գլխավոր մասնագետ/2.3-1/	1	126000
Աշխատակազմի առաջատար մասնագետ/3.1-1/	1	125000
Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ/3.2-1/	1	110000
ՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ		
Օպերատոր	1	78000
Հավաքարար	1	81000
Պահակ	1	73000

Համայնքի ղեկավար՝ Ա. Իոնանով

Աշխատակազմի քարտուղար՝ Թ. Արշակյան

Հավելված 2

Դիմիտրով գյուղական համայնքի ավագանու
2015 թվականի դեկտեմբերի 1-ի թիվ 28– Ն որոշման

ԴԻՄԻՏՐՈՎԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ և ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների քանակը-2
2. Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը /ՀՀ դրամ/
Գրադարանավար	1	73000
Ակումբավար	1	73000

Աշխատակազմի քարտուղար՝ Թ. Արշակյան

Հավելված 3

Դիմիտրով գյուղական համայնքի ավագանու
2015 թվականի դեկտեմբերի 1-ի թիվ 28– Ն որոշման

ԴԻՄԻՏՐՈՎԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ և ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների քանակը-9
2. Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը /ՀՀ դրամ/
Մանկապարտեզի տնօրեն	1	120000
Դաստիարակ	1	78000
Դաստիարակի օգնական	1	78000
Նախակրթարանի դաստիարակ	1	78000
Երաժշտության դաստիարակ	1	78000
Հաշվապահ	1	78000
Խոհարար	1	78000
Պահակ	1	78000
Այգեպան	1	78000

Աշխատակազմի քարտուղար՝ Թ. Արշակյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դիմիտրով համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դիմիտրով (094)730000,, dimitrov-gyuxapetaran@mail.ru,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 դեկտեմբերի 2015 թվականի N 29-Ն

ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասով, համայնքի ավագանին որոշում է՝

Ելնելով անհրաժեշտությունից համայնքի բյուջեում կատարել ստորև բերված փոփոխությունները.

11 01 02 51 <<Վարչական բյուջեի պահուստային ֆոնդ>> ծրագրի մեջ 4891 հոդվածից 1027.0/ մեկ միլիոն քսանյոթ հազար/ դրամ տեղափոխել.

1) 01 01 01 51 ծրագրի 4111/աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ/ հոդվածին 250.0/երկու հարյուր հիսուն հազար/ դրամ.

2) Ծառայողական ավտոմեքենայի տեխ.զննության նպատակով 01 01 01 51 ծրագրի 4823/պարտադիր վճարներ/ հոդվածին՝ 27.0/քսանյոթ հազար/ դրամ.

3) Սոցիալապես անապահով անձանց աջակցության նպատակով 10 07 01 51 ծրագրի 4729/ այլ նպաստներ բյուջեից 750.0/ յոթ հարյուր հիսուն հազար/ դրամ:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՀԵՆՐԻԿ
2. ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ
3. ՄԻՐԶՈՅԱՆ ԳՐԻԳՈՐ
4. ՄԽԻԹԱՐՅԱՆ ԵՐԱՆՈՒՀԻ
5. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԱՆ ԻՈՆԱՆՈՎ